ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՐԵՎՄՏԱՀՌՈՄԵԱԿԱՆ ՄԵՏԱՂՅԱ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի անտիկ շրջանի հուշարձանների վերջին տարիների պեղումները զգալիորեն ավելացրեցին ներմուծված նյութերի քանակը, որը հնարավորություն է տալիս նորովի մեկնաբանել Հայաստանի մշակութային և առևտրատնտեսական կապերը։ Դրանց մեջ առանձնանում են իտալիկյան և Հռոմեական կայսրության արևմտյան շրջաններից բերված իրերն ու առարկաները, որոնք մինչ այդ շատ քիչ էին հայտնի։ Այս տեսակետից հետաքրքիր է Սիսիանի իշխանական դամբարանից հայտնաբերված ձևավոր կանթով բրոնզե գավաթը (իրանի մի մասը թերի է), որը պատրաստված է բարակ թիթեղից՝ կռելու եղանակով, իսկ կանթը ձուլված է (բարձր. մոտ 11,5 սմ, պս. տր. 6,5 սմ, հատ. տր. 5,7 սմ)։ Գավաթն ունի երկկոնաձև իրան, դեպի դուրս լայնացող պսակ, հարթ հատակը դրսից հարդարված է փորագիր համակենտրոն շրջաններով (աղ. I₁)։ Հատակպես ուշագրավ է աղեղնաձև ուղղահայաց կանթը, որը նման է խաչի։ Այն աջ ու ձախ ձգվող թևերով կպած է պսակին։ Կանթի վերին մասը ձևավորված է դիմապատկերով, որը տեղադրված է խաչի թևերի բաժանման մասում։ Դիմագծերը շատ են ընդհանրացված. մաշվածության պատճառով դրանք երևում են աղոտ ու անորոշ՝ հազիվ նշմարվում են երկար քիթը և աչքերը։ Գլխի ռելիեֆ գոտին, ելուստի հետ միասին, սաղավարտի տպավորություն է թողնում։ Ստորին մասում կանթն ավարտվում է կիսանդրիով։ Քանդակը պատկերում է համաչափ դիմագծերով, կարճ մորուքով ծերունու, որի սաղավարտի տակից դուրս են եկել ալիքաձև մազերը։ Նրա ուսերին հազիվ նկատելի են հագուստի ծալքերը։ Նման գավաթի մի կանթ 1983 թ. հայտնաբերվել է Արմավիրի[1] արևմրտյան թաղամասի վերին շերտից։ Կանթի ներքևի կիսանդրին նույնն է, ինչ որ Սիսիանինը, իսկ վերին մասով քիչ տարբերվում է։

Երկկոնաձև գավաթներ հայտնի են անտիկ աշխարհի մի շարք հնավայրերից և պահվում են տարբեր թանգարանների հավաքածուներում։ Դրանք չափերով իրարից քիչ են տարբերվում, թվագրվում են մ. թ. ա. II—I դդ. և համարվում են իտալիկյան[2]։ Այդպիսի ամենավաղ հայտնագործությունները վերաբերում են Օրնտվասի իտալիկյան դամբարաններին[3] (մ. թ. ա. II դ. վերջ)։ Հարավային Իտալիայից (Կամպանից) գտնված նման գավաթներ են պահվում Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում[4], Լուվրում[5], Էրմիտաժի անտիկ բաժնում (Բոտկինի, инв. №В. 1967 և Կամպանի հավաքածուներում՝ инв. №В. 565, В.611)։ Այդպիսի գավաթներ հայտնի են Մերձկուբանյան շրջանից՝ Դախովսկայա ստանիցայից[6], Կալինովսկի (Վոլգոգրադի մարզ) սարմատական

---

[1] Գ. Ա. Տիրացյանի պեղումներից (չհրատարակված նյութեր)։

[2] Д. Б. Шелов, Римские бронзовые кувшины и амфоры в восточной Европе («Советская археология», 1983, № 4, с. 63—64, рис. 1, 6).

[3] H. Willers, Neue Untersuchungen die romische Bronzeindustrie von Capua und von Niedergermanien, Hannover und Leipzig, 1907, S. 14, 19, Abb. 12, E.7.

[4] G. M. A. Richter, Greek, Etruscan and Roman bronzes, New York, 1915, p 195, pl. 512, 2703, 2713.

[5] A. de Ridder, Les bronzes antiques du Louvre, v.II, Paris, 1915, pl. 98.

[6] Б. В. Лунин, Серебряная чаша с рельефными изображениями в греческой надписью и стеклянная чашка из находок у станицы Даховской («Известия Ростовского областного музея краеведения», вып. 2, Ростов-на-Дону, 1940, с. 27—29, 33 и сл.).



Աղ. 1

դամբարաններից[7], *սակայն չափերով ու կանթի քանդակներով Սիսիանի գավաթն աղերսվում է Կուրանի (Հյուսիս-Օսեթական ԱՍՍՀ) դամբարաններից*[8]

[7] В. П. Шилов, Калиновский курганный могильник («Материалы и исследования по археологии СССР», № 60, М., 1959, с. 484, рис. 57, 3), *նույնի՝* Южноиталийские сосуды Калиновского могильника («Сообщения Гос. Эрмитажа», Л., 1973. XXXVI, с. 34); «Античная художественная бронза», каталог, выставки, Л., 1973, № 251.

[8] П. С. Уварова, Могильники Северного Кавказа («Материалы по археологии Кавказа», т. VIII,1900, с. 85, рис. 81); В. В. Кропоткин, Римские импортные изделия в Восточной Европе (II в. до н. э.—V в. н. э.) («Свод археологических источников» (*այսուհետև* САИ), вып. Д 1—27, М., 1970, с. 23, 94, рис. 57, 3,60,6); М. П. Абрамова, Памятники горных районов центрального Кавказа рубежа и первых веков нашей эры (по материалам Северной Осетии и Кабардино-Балкарии) («Археологические исследования в юго-восточной Европе», М., 1974, с. 16, 17, рис. III, 32, XII).

գտնված գավաթների հետ։ Վերոհիշյալ զուգահեռներից ելնելով, կարելի է ասել, որ Սիսիանի և Արմավիրի գավաթները նույնպես հարավիտալիկյան ծագում ունեն և հնարավոր է, որ պատրաստվել են Գապուայում՝ բրոնզե անոթների արտադրության այդ փառաբանված կենտրոնում։ Սիսիանի գավաթը հարակից նյութերով, այդ թվում նաև դրամներով, որոնցից ամենաուշը Օրոդես II-ի արծաթյա դրամն է, թվագրվում է մ. թ. ա. I դ. կեսերով։

Արտաշատի արևելյան դամբարանադաշտից հայտնաբերվել է բրոնզե մի դիմաքանդակ[9], որն ամրացված է եղել բրոնզե կրուկարանի վրա։ Այն պատկանում է ստորուկներին վերագրվող դիմակների թվին։ Դեմքը խիստ գրոտեսկային է. աչքերը խոշոր են, դուրս պրծած խնձորակներով, շեշտված, մկանուտ և կիտված հոնքերը կերպարին հաղորդում է ցասկոտ տեսք։ Քթի վերնամասը ամբողջությամբ ներս է ընկած և միայն ստորին մասն է սրածայր ցցված։ Բերանը, որը նման է բացված ծովախեցու, դեմքի համեմատ չափազանց մեծ է և կերպարին տալիս է կիսաֆանտաստիկ բնույթ։ Խիտ մազերը կարծես լայն ատամնավոր սանրով ետ են սանրված և գլխի երկու կողմերում ավարտվում են երեքական հյուսքով (աղ. II_3)։ Դիմակի այսպիսի բարձրաքանդակ կա Պերգամոնում[10], որը քթի, բերանի ու մորուքի ձևով, աչքերի փոսիկներով մոտենում է վերոհիշյալին, սակայն Արտաշատի դիմաքանդակն իր զուգահեռներն ունի Պոմպեյում գտնված բրոնզե վառարանների վրա ամրացված դիմակների մեջ[11]։ Արտաշատի դիմակը, ամենայն հավանականությամբ, իտալիկյան է և վերաբերում է մ. թ. ա. I դ. վերջին և մ. թ. I դ. սկզբին, այսինքն՝ օգոստոսյան շրջանին։

Ուշադրության արժանի են կայսրության արևմտյան շրջաններից ներմուծված աշտանակները։ Հետաքրքիր է հատկապես Կարսի մարզի Նախճավան գյուղից գտնված աշտանակը, որի ոտքերը արվեստի գործ են։ Դրանք աղեղնաձև իջնում և գալարաձև պտտվելով միանում են գեղեցիկ քանդակված, ճկունորեն ծալված այծի ոտքին, որի կճղակը գրված է խարսխի վրա։ Գալարաձև մասը վրայից ծածկված է ականթի տերևով[12]։ Նախճավանի աշտանակի մանրամասները հանդիպում են հունահռոմեական[13] աշխարհի հուշարձանների վրա։ Այն աղերսվում է Հերկուլանումից գտնված աշտանակների հետ (աղ. $I_{2,4}$) և թվագրվում է օգոստոսյան շրջանով[14]. ուստի, շատ հավանական է, որ այն իտալիկյան կամ էտրուսկյան լինի։ Մի քանի աշտանակներ են հայտնաբերվել նաև Արտաշատի և Սիսիանի դամբարանից։ Արտաշատի աշտանակից մեզ է հասել միայն առևակոսներով հարդարված երկաթե միջուկով արծաթե ձողի մի հատվածը՝ տակառաձև լայնացող ձևավոր մասով։ Վերին և ներքին մասերը պահպանված չլինելու պատճառով դժվար է նրա նախնական ձևը վերականգնել (աղ. III_1)։ Դատելով առևակոսներով ձողի բեկորից, այն ևս պետք

---

9 Ժ. Դ. Խաչատրյան, Արտաշատ, II, Անտիկ դամբարանադաշտեր (1971—1977 թթ. պեղումները), Երևան, 1981, էջ 93, տախտ. XXVII, 4.

10 M. Bieber, The History of the Greek and Roman theater, Princeton, London 1939, fig. 273.

11 P. Gusman, Pompei. La villes moeurs les Arts, Paris, 1899, p. 298, 350.

12 К. В. Тревер, Бронзовая ножка канделябра из Нахчавана («Известия российской академии истории материальной культуры», т. I, Петербург, 1921, с. 261—264).

13 Նույն տեղում, էջ 263, 264; H. B. Walters, Catalogue of the bronzes, Greek. Roman and Etruscan in the British Museum, London, 1899, №774; F. Magi, Bronzi e aggetti vari, La raccolta Benedetto Gugl ielmi nel Museo Gregoriano etrusco, parte II, Citta del Vaticano, 1941, P. 50, 177, Tav. 50, 2a, 4a, 5, 6, Tav. 63, 7.

14 К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 262, 264։

15 Ժ. Խաչատրյան, Արտաշատի VII բլրի 1973—1975 թթ. պեղումների արդյունքները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 8, ծան. 1)։



Աղ. II

Է Նախճավանի աշտանակի նման շքեղ եղած լինի։ Արտաշատի աշտանակի ձողը գտնվել է I բլրի վերին (երկրորդ) շերտից[15] (4H քառ. խոր. 30 սմ), այն սենյակից, որտեղից հայտնաբերվել է արծաթյա անոթի հիպոկամպի պատկերով կանթը, արծաթյա և բրոնզյա այլ իրեր և բեկորներ։ Այն կարող է թվագրվել մ. թ. ա. I դ. վերջով և մ. թ. I դ. առաջին կեսով։ Արծաթե, բրոնզե և երկաթե աշտանակները լայն տարածում ունեին անտիկ աշխարհում։ Հայտնի էին հատկապես իտալիկյան և էտրուսկյան աշտանակները, որոնք գեղեցիկ ձևավորված և հարդարված էին տարբեր տեսակի քանդակներով[16]։ Դրանք հիմնականում ավարտվում են առյուծի, ձիու, այծի և այլ կենդանիների ոտքերով։ Ձողերը մեծ մասամբ ունեն առևակոսներ։ Արտաշատի վերոհիշյալ աշտանա-

[16] F. Magl, Նշվ. աշխ., տախտ. 50, 2a,3a, 4a.

կի ձողը, ամենայն հավանականությամբ, նույնպես իտալիկյան ծագում ունի։ Սիսիանի դամբարանից հայտնաբերված աշտանակներից մեկը համեմատաբար լավ է պահպանված, պատրաստված է երկաթե միջուկի վրա բրոնզե թիթեղ փաթաթելու և զոդելու միջոցով։ Երկաթե միջուկի քայքայումն էլ պատճառ է դարձել բրոնզե թիթեղի փչացման։ Ձողի վերին ծայրին ամրացված է հորիզոնական հատակով բրոնզե ծանծաղ ափսե (աղ. II$_{1,2}$), ցածում այն հենվում է կենդանու գեղեցիկ ձևավորված երեք ոտքերի վրա։ Ձողը հիմքում ունի եռանկյունի թիթեղ, որի սուր ծայրերն ուղղված են ոտքերի մեջտեղը։ Թիթեղի տակից դեպի ոտքերն են դուրս գալիս, փորագրելու եղանակով զարդարված, աստիճանաբար բարձրացող տերևներ։ Մինչ ծնկին հասնելը ձողը ետ ու առաջ է ծալվում կեղծ գալարազարդի ձևով։ Կճղակը ուղիղ մեջտեղից ակոս ունի։ Սիսիանի աշտանակի ոտքերին որոշակի նմանություն ունեն Պրիենայում[17] և Պոմպեյում[18] գտնված, ինչպես և Լուվրում[19] ու Քեմբրիջում[20] պահվող աշտանակները։ Սիսիանի աշտանակը, ամենայն հավանականությամբ, ներմուծված իտալիկյան աշտանակների ընդօրինակություն է և թվագրվում է մ. թ. ա. I դ.։

Արտաշատի պեղումներից հաճախ են երևան գալիս բրոնզե ճարմանդներ, սակայն դրանց մեջ կան որոշ օրինակներ, որոնք իրենց ձևով ու հարդարանքով առանձնանում են մյուսներից։ Դրանցից մեկը VIII բլրից հայտնաբերված ուղղանկյուն, կիսակլոր վահանով մի ճարմանդ է, որի մակերեսը բաժանված է երեք մասի։ Կենտրոնական ուղղանկյուն բացվածքի մեջ ապակյա երկու ուլունք է ամրացված, իսկ բացվածքը շրջանակված է ատամնավոր զարդագոտիով։ Վերջինիս երկու կողմերում եղած ուղղանկյունների մեջ արված է չորոսական կարմիր ու կանաչ, մեկընդմեջ էմալով լցված, եղևնաձև զարդ։ Այս ուղղանկյուն հարթությունները նույնպես ատամնավոր շրջանակներ ունեն։ Վահանակը շրջափակված է ռելիեֆ ալիքաձև զարդով, որը վերցված է ատամնավոր գոտիների մեջ։ Երկու կողմերի կենդանակերպ ելուստներին ամրանում է ասեղը (աղ. III$_5$)։ Ձևով ու զարդերով այս ճարմանդը աղերսվում է Կոմունտայից[21] (Հյուսիս-օսեթական ԱՍՍՀ), Բորիից[22] (Վրաստան) հայտնաբերված ճարմանդների հետ, որոնց արտադրության կենտրոնները գտնվում էին հռոմեական կայսրության արևմտյան շրջաններում՝ Պաննոնիայում[23], որտեղից և արտահանվել են Արևելք։ Դրանց արտադրության ժամանակը սահմանափակվում է մ. թ. II դ. երկրորդ կեսով[24]։ Արտաշատի ճարմանդը կարող է թվագրվել նույն ժամանակով, որին չեն հակասում նաև նրա հետ հայտնաբերված նյութերը։

Արտաշատի VIII բլրից հայտնաբերված չորս ճարմանդներ ունեն եռանկյունաձև վահանակ, որոնք հարդարված են եռանկյունաձև փորագիր բացվածք

---

[17] Th. Wiegand und H. Schrader, Priene, Berlin, Georg Reimez, 1904, s. 383, Abb. 484.

[18] A. Mau, Pompeji in Leben und Kunst, Leipzig, 1908. Fig. 217; E. Pernice, Gefässe und geräteaus bronze, Die Hellenistische Kunst in Pompeji, Band IV, Berlin, und Leipzig, 1925, s. 47, 49, 54, 55, Abb. 58, 59, 61, 70.

[19] A. de Ridder, նշվ. աշխ., տախտ. 112, №3154,3155, 3159, 3161, 3162, տախտ. 113, № 3173,

[20] G. M.A. Richter, Catalogue of Greek Antiquities Dumharton Oaks collection, Cembridge, 1956, p. 43, pl. XVI c.

[21] А. К. Амброз, Фибулы юга европейской части СССР, II в. до н. э.—IV в. н. э. (САИ), Д1—30, М., 1966, с. 29, табл. 14, 14).

[22] Նույն տեղում, տախտ. 14, 10։

[23] H. B. Walters, M. A., F. S. A., Catalogue of the Bronzes, Greek, Roman and Etruscan, in the department of Greek and Roman Antiquities, British Museum, London, 1899, fig. 44, №2162.

[24] САИ, Д1—30, с. 29.



Աղ. III

ունեցող զարդերով (աղ. III2-4)։ Այս ճարմանդները նույնպես համարվում են հռոմեական արևմտյան շրջանների արտադրանք և թվագրվում են մ. թ. ա. և մ. թ. I դդ.[25]։ Մ. թ. ա. II դ. կեսերին հռոմեական հանրապետությունը վերածվեց միջերկրածովյան հսկայածավալ պետության։ Այդ շրջանում և հատկապես մ. թ. ա. I դ. Արևելքում Հռոմի ամրապնդվելուց հետո առևտրական գլխավոր ճանապարհներն ընկան նրա հսկողության տակ։ Դրանք ավելի բարեկարգ ու անվտանգ դարձան, վերացան մաքսային խոչընդոտները։ Այս ամենը նպաստեց առևտրի բուռն վերելքին Արևելքի ու Արևմուտքի միջև։ Հռոմեական աշխարհի առևտրական ամենակարևոր մարզերից մեկը Սիրիան էր, որն իր ա-

25 Նույն տեղում, էջ 27, տախտ. 4, 22։

ռևտրական ֆակտորներն ուներ ամբողջ Միջերկրականի ափերին։ Այսինքն՝ այն Արևելքն ու Միջերկրականը կապող հիմնական օղակներից մեկն էր։

Միջազգային առևտրական ճանապարհներն անցնում էին նաև Հայաստանով, որը, ընդգրկվելով առևտրի աշխույժ ոլորտի մեջ, ինքն էլ իր ապրանքներով ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում։ Արդյունքն եղավ այն, որ առևտրական ավանդական կապերից բացի, երևան եկան նորերը, այսինքն՝ Հայաստան սկսեց ներմուծվել նաև իտալիկյան և Հռոմեական կայսրության արևմտյան մարզերի արտադրանքը։ Դրանով էր պայմանավորված նաև Հայաստանի և առևտրական ճանապարհների վրա գտնվող նրա քաղաքների, առաջին հերթին Արտաշատի, բարգավաճումը, տնտեսական ու մշակութային աննախընթաց վերելքը։ Այդ են վկայում Արտաշատի պեղումները, որին բաժին է ընկնում Հայաստան ներմուծված իրերի ու դրամների մեծ մասը և Արտաշատի V բլրից հայտնաբերված մ. թ. ա. II դ և մ. թ. I դ. կեսերին վերաբերվող իտալիկյան բաղմաթիվ կնքադրոշմները։

Հայաստանում գտնված արևմտահռոմեական մետաղյա արտադրանքի վերոհիշյալ նմուշները, ամենայն հավանականությամբ, ներմուծվել են սիրիական առևտրական կենտրոններից, հնարավոր է Անտիոքի միջոցով, իսկ ճարմանդները կարող էին բերել նաև հռոմեական լեգիոնները։

Հռոմի արևելյան քաղաքականության հետևանքով մ. թ. ա. II—I դդ. Հունաստանի, Փոքր Ասիայի, Սիրիայի ու Եգիպտոսի գեղարվեստական մետաղի արտադրանքի բոլոր կարևոր կենտրոններն ընկան նրա ազդեցության ոլորտը։ Ոչ միայն յուրացվեցին այդ կենտրոնների հարուստ փորձն ու ավանդույթները, այլև ստեղծվեցին մի շարք նոր կենտրոններ։ Այդ արհեստանոցների արտադրանքը հարմարվեց հռոմեացիների ճաշակին[26]։ Շատ նշանավոր արհեստավորներ տեղափոխվեցին Իտալիա և այնտեղ հիմնեցին իրենց արհեստանոցները։ Մ. թ. ա. II և հատկապես մ. թ. I դդ. այսպես կոչված հռոմեական գեղարվեստական բրոնզը, որն արտադրվում էր ոչ միայն Իտալիայում, այլև կայսրության տարբեր մարզերում, հայտնի էր անտիկ աշխարհում և լայնորեն կիրառվում էր կենցաղում։ Տարածված էին բրոնզե արձանիկներն ու գեղարվեստական բարձր ճաշակով պատրաստված կենցաղային առարկաները։ Հունական գեղարվեստական մետաղի օրինակով հռոմեական վարպետները նույնպես առօրյա առարկաներն ու անոթները զարդարում էին քանդակագործական փոքրիկ պատկերներով։

Գեղարվեստական բրոնզի պատրաստման ասպարեզում մ. թ. I—II դդ. առաջնությունը պատկանում էր Հարավային Իտալիայի արհեստանոցներին։ Տարենտը հայտնի էր իր տորևտիկայով, Բրունդիզիումը՝ բրոնզե հայելու արտադրանքով, իսկ Կապուան՝ բրոնզե գեղեցիկ անոթներով, որի ծաղկման շրջանը մ. թ. I դարն է՝ մինչև Պոմպեյի կործանումը[27] (մ. թ. 79 թ.)։ Հռոմեական գեղարվեստական ու կենցաղային իրերի և առարկաների արտահանումը դեպի հեռավոր երկրներ, նպաստեց նաև անտիկ ավանդների լայն տարածմանը։ Դեպի շքեղությունն ու գեղարվեստական իրերը հռոմեացիների ունեցած հակումը անցավ նաև նրա ազդեցության տակ գտնվող ժողովուրդներին։ Ինչպես վկայում են Միսիանի իշխանական դամբարանի կահույքը, ոսկյա, արծաթյա և բրոնզյա բարձրարժեք տպասը, գեղարվեստական իրերն ու առարկաները, Նախճավանի աշտանակը, Արտաշատից և անտիկ շրջանի մյուս հնավայրերից հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները, Հայաստանի վերնախավը նույնպես զերծ չի մնացել այդ ընդհանուր միտումից։ Նա իրեն շրջապատել է կենցաղային շքեղ իրերով ու առարկաներով և ըստ արժանվույն գնահատել արվեստի բարձրարժեք ստեղծագործությունները, թեև

---

26 «Античная художественная бронза», с. 82.

27 Նույն տեղում, էջ 84; «Художественное ремесло эпохи римской империи (I в. до н. э.— IV в.)», каталог выставки, Л., 1980, с. 7; С. И. Капошина, Связи сарматских племён нижнего Подонья со Средиземноморьем в I в. до н. э. и в первые века нашей эры («Античное общество», М., 1967, с. 145).

Արևելքում, այդ թվում նաև Հայաստանում, այդ հակումը ի սկզբանե եղել է։ Դեռևս Քսենոփոնը վկայում է, որ երբ հույները գրավեցին Տիրիբազի վրանը նրա մեջ կային արծաթե ոտքերով մահիճներ և բմպանակներ[28]։ Ամենայն հավանականությամբ, մ. թ. առաջին դարերում այդ հակումն ավելի է ուժեղացել ժամանակի ոգուն համապատասխան և մեծացել է պահանջարկը ներմուծված արտադրանքի նկատմամբ։

ЗАПАДНОРИМСКИЕ МЕТАЛЛИЧЕСКИЕ ИЗДЕЛИЯ, НАЙДЕННЫЕ В АРМЕНИИ

ЖОРЕС ХАЧАТРЯН

Резюме

В последнее время в Армении найдены привозные новые материалы, позволяющие в новом свете рассматривать культурные и торгово-экономические связи Армении с античным миром. Среди привозных материалов обособленно выступают италийские металлические изделия из западных провинций римской империи. Особый интерес представляют кружка и ручка, найденные из погребения в Сисиане и Армавире, которые в нижней части украшены бюстом бородатого мужчины. Они считаются южноиталийскими (капуанскими) изделиями и датируются I в. до н. э. Канделябры из Нахичевана и Арташата тоже имеют италийское происхождение, а один из сисианских канделябров является подражанием италийским. Из этого же региона происходит и гротескная маска, украшавшая жаровню августовского времени. Бронзовые фибулы, найденные из Арташата, одна из которых украшена ажурной эмалью, а другие имеют рельефные треугольные орнаменты, привезены из западных областей Римской империи. Украшенный эмалью экземпляр датируется серединой II в. н. э., а остальные— I в. до н. э. и I в. н. э. Вышеупомянутые западноримские металлические изделия попали в Армению в результате торговых сношений или через римских легионеров.

---

[28] Хепор, Апав. IV, 19.